

Փետր. 27, 1974

Մեծայարգ  
Տիար Կարապետ Պաղտասարեան  
Միլիոնքի, Ուխտաբանսրն.

Յարգելի Տիար Կ. Պաղտասարեան,

Ստացած եմ Փետր. 20, 1974 թուակիր Ձեր նամակը եւ ներփակ-  
եալ 25.00 տուարի չէքը, որուն համար շնորհակալութիւն կը յայտ-  
նեմ:

Սակայն Ձեր նամակի բովանդակութենէն յստակ կերպով չկրցայ  
հասկնալ թէ ի՞նչքան Ձեզի մտածել տուած է թէ Ձեր անունը դուրս  
նետուած է ՝ Սէյնթ Վարդան Սթիւուըրտսի ցանկէն: Ընդհակառակն՝  
կրնաք վստահ ըլլալ որ մեզի համար պատիւ կը նկատենք Ձեր անունը  
ունենալ մեր ցանկին վրայ:

Կը ներփակենք Առաջնորդարանի կողմէ պատրաստուած սթիւուըրտ-  
ներու ամբողջական ցանկը, ուր Ձեր անունը արձանագրուած է վեր-  
ջաւորութեան տրուած ըլլալով որ որեւէ համայնքի մը կողմէ ներ-  
կայացուած չէր մեզի: Այժմ Ձեր անունը մաս կը կազմէ Կրիսթիանի  
Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ համայնքի ցանկին:

Իսկ խօսելով տարեկան վճարումի մասին՝ կը խնդրեմ որ դուք  
Ձեզ ազատ զգաք Ձեզի յարմար ձեւով կարգադրութիւն ընելու համար:

Վստահ եմ որ տուած բացատրութիւններս կը գոհացնեն Ձեզ:

Առողջութեան եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Ճէգ Անդրէասեան  
Վարիչ-Տնօրէն